# ΣΧΟΛΙΚΗ ΧΡΟΝΙΑ 2026-2027
# ΠΛΑΙΣΙΟ ΜΑΘΗΣΗΣ ΚΑΙ ΠΡΟΓΡΑΜΜΑΤΙΣΜΟΣ
# ΑΡΜΕΝΙΚΑ Γ΄ ΛΥΚΕΙΟΥ
# Α΄ ΤΕΤΡΑΜΗΝΟ

## ՀԱՅԵՐԷՆ

| **ΣΤΟΙΧΕΙΑ ΜΑΘΗΜΑΤΟΣ** | |
|---|---|
| **ΕΒΔΟΜΑΔΙΑΙΕΣ ΠΕΡΙΟΔΟΙ ΔΙΔΑΣΚΑΛΙΑΣ: 4** | **ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ** |
| **Διδακτικά εγχειρίδια-Βιβλιογραφία:**<br>ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ 2<br>Հեղինակ՝ Յարութիւն Քիւրքճեան<br>Բառարան<br>Գործնական Բառարան Հայերէն Լեզուի<br>Հեղինակ՝ Հայր Անդրանիկ Կռանեան | |
| **Υλικά και μέσα που θα χρησιμοποιήσουν οι μαθητές κατά τη διδασκαλία του μαθήματος:**<br>Նշուած թեմաներով յաւելեալ նիւթեր ըստ պահանջքի, նաեւ լեզուական աշխատանքներ եւ քերականական ու բառագիտական վարժութիւններ պիտի տրուին աշակերտներուն համացանցէն, ինչպէս նաեւ ուսուցիչին կողմէ պատրաստուած: Յաւելեալ թեմաներ կարելի է աւելցնել ըստ ուսուցիչի հայեցողութեան, նկատի ունենալով աշակերտներուն պահանջքը եւ հետաքրքրութիւնները: Դասաւանդութեանց ընթացքին կ`ը լլայ արուեստագիտութեան օգտագործում: | |
| **ΓΕΝΙΚΟΣ ΣΚΟΠΟΣ (ΓΕΝΙΚΟΣ ΔΕΙΚΤΗΣ ΕΠΙΤΥΧΙΑΣ)**<br>Հայերէն լեզուի դասերուն նպատակն է բարձրացնել աշակերտներուն լեզուի իմացութեան մակարդակը՝ կարենալ այն արդիւնաւէտ կերպով օգտագործելու կրթական, ընկերային եւ աշխատանքային միջավայրի մէջ: Հայերէն լեզուի դասերը կը միտին աւելի բարձր մակարդակով զարգացնել անոնց իմացութիւնը հայ մշակոյթի, հայ արժէքներու եւ աւանդութիւններու: Մայրենի լեզուի ուսուցումը ներդրում է անոնց ինքնութեան համար: Այս դասերը կու տան աշակերտներուն հարուստ փորձառութիւն ըմբռնելու եւ գնահատելու տարբեր մշակութային իրականութիւններ, բազմալեզու եւ բազմամշակոյթ աշխարհին մէջ եւ ունենալու իրենց ներդրումը անոնց զարգացման համար: Հայերէնի դասընթացքը միտում ունի զարգացնել աշակերտներու հմտութիւնները, ստեղծագործական կարողութիւնները, քննադատական մտածողութիւնը, ինքնազարգացման ձգտումը եւ կարողութիւնը, 21րդ դարու համապատասխան՝ ըլլալու գործօն քաղաքացիներ: | |
| **ΑΝΑΜΕΝΟΜΕΝΑ ΜΑΘΗΣΙΑΚΑ ΑΠΟΤΕΛΕΣΜΑΤΑ (ΔΕΙΚΤΕΣ ΕΠΑΡΚΕΙΑΣ)**<br><br>Աշակերտները պիտի կարենան՝<br>- Հետեւիլ ու հասկնալ երկար եւ բարդ թեմաներով կրթական եւ այլ դասախօսութիւններ, քննարկումներ ու կատարել նշումներ:<br>- Կարդալ եւ անհրաժեշտ տեղեկութիւնները գտնել եւ գրել գիրքերէ, յօդուածներէ, գրութիւններէ:<br>- Կարդալ տարբեր թեմաներով գիրքեր, հասկնալ կարեւոր գաղափարները եւ խօսիլ ու գրել այդ մասին:<br>- Իրենց բնագաւառին մէջ բարդ նիւթերու շուրջ լաւ կառուցուածքով բանախօսութիւն գրել ու ներկայացնել:<br>- Մասնակցիլ սահուն եւ ինքնաբուխ լեզուով տարբեր նիւթերու վերլուծումներու եւ քննարկումներու՝ տալով իրենց տեսակէտները եւ պատճառաբանելով:<br>- Տարբեր աղբիւրներէ կարդալ, հաւաքել ու ամփոփել անհրաժեշտ տեղեկութիւնները:<br>- Գրել իրենց պատմուածքները եւ բանաստեղծութիւնները տարբեր թեմաներով, արտայայտելով իրենց մտածումները եւ զգացումները: | |
| **Οι μαθητές με την ολοκλήρωση του μαθήματος θα πρέπει να είναι σε θέση να -**<br>- Ներկայացնել բերանացի եւ գրաւոր կերպով լեզուի եւ մշակոյթի պատմութեան մասին:<br>- Խօսիլ եւ գրել տարբեր քաղաքներու, մարդոց եւ սովորութիւններու մասին եւ տալ իրենց կարծիքները:<br>- Իրենց կարդացած գրական գործերէն ներկայացնել գլխաւոր գաղափարները եւ արժէքները բերանացի եւ գրաւոր կերպով:<br>- Համեմատել տարբեր նկարագիրներ իրենց առաւելութիւններով ու թերութիւններով եւ քննարկել երիտասարդներու վերաբերող հարցեր:<br>- Ուսումնասիրել ընկերային տարբեր երեւոյթներ եւ ապա ներկայացնել իրենց կարծիքը բերանացի եւ գրաւոր:<br>- Բացատրել թարգմանութիւններու կարեւորութիւնը եւ կատարել թարգմանութիւն յունարէն լեզուէ եւ հայերէնով գրութիւններ թարգմանել յունարէն լեզուի:<br>- Բազմամշակոյթ եւ բազմալեզու իրականութեան մասին խօսիլ եւ գրել իրենց մտածումները: | |

## ΔΕΙΚΤΕΣ - ΕΝΟΤΗΤΕΣ

**Մշակոյթի Պատմութիւն**
Լեզուի
Պատմութիւն
Գրական նոր Հայերէն

**Ճամբորդութիւններ**
Մարդիկ
Սովորութիւններ
Բնաշխարհ

**Գրական Գործեր**
Գաղափարներ
Ներշնչում
Արժէքներ
Վերաբերմունք

**Ապրելակերպեր**
Անհատականութիւններ
Նկարագիրներ
Հաղորդակցութիւն
Երիտասարդներու հարցեր

**Երգիծանք**
Քննադատութիւն
Ընկերային երեւոյթներ

**Թարգմանութիւն**
Լեզուներ
Յունարենէ-
Հայերէն Հայերենէ-
Յունարէն

| ΑΞΙΟΛΟΓΗΣΗ | |
|---|---|
| | |
| | i. **Աշակերտին մասնակցութիւնը դասարանին մէջ** -Հետաքրքրութիւնը դասին հանդէպ եւ ամէնօրեայ բերանացի մասնակցութիւնը, նախաձեռնութիւն ունենալը, գործակցութիւնը տարբեր աշխատանքներու, նաեւ ընդհանուր ներդրումը դասի ընթացքին<br><br>ii. **Տնային աշխատանք** - Դասարանին մէջ բացատրուած նիւթի հիման վրայ հարցում-պատասխան, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի վրայ գրաւոր ստուգում<br><br>iii. **Դասարանային գրաւոր աշխատանք** - Դասաւանդուած նիւթի հիման վրայ հարցումներ, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի հիման վրայ գրաւոր ստուգում<br><br>iv. **Ուսումնասիրական եւ ստեղծագործական աշխատանք** - Անհատական կամ խմբային, տրուած նիւթի եւ առաջադրանքներու հիման վրայ<br><br>v. **Յաւելեալ կամաւոր աշխատանք** - Դասանիւթին առնչուած սակայն դասէն անկախ կամաւոր մասնակցութիւն կամ աշխատանք հայերէնի հետ կապուած |

| ΠΡΟΓΡΑΜΜΑΤΙΣΜΟΣ | | |
|---|---|---|
| | ΕΝΟΤΗΤΕΣ / ΚΕΦΑΛΑΙΑ | ΠΕΡΙΟΔΟΙ ΔΙΔ. |
| | **Մշակոյթի Պատմութիւն**<br><br>Լեզուի Պատմութիւն<br>Գրական նոր Հայերէն | 8 |
| | **Ճամբորդութիւններ**<br><br>Մարդիկ<br>Սովորութիւններ<br>Բնաշխարհ | 9 |
| | **Գրական Գործեր**<br><br>Գաղափարներ<br>Ներշնչում<br>Արժէքներ<br>Վերաբերմունք | 14 |
| | **Ապրելակերպեր**<br><br>Անհատականութիւններ<br>Նկարագիրներ<br>Հաղորդակցութիւն<br>Երիտասարդներու հարցեր | 14 |
| | **Երգիծանք**<br><br>Քննադատութիւն<br>Ընկերային երեւոյթներ | 11 |
| | **Թարգմանութիւն**<br><br>Լեզուներ<br>Յունարենէ-Հայերէն<br>Հայերենէ-Յունարէն | 8 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

| | | |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |